Արձանագրություն N 3
ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/79 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

22 նոյեմբերի 2022թ.
ժամը 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Տ. Պետրոսյանը
Անդամներ՝ Շ. Առաքելյանը
Քարտուղար՝ Ա. Քոթանջյանը
Բացակայում եր հանձնաժողովի անդամ՝ Հ. Վանյանը

I. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

(Տ. Պետրոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ ՀՀ ֆինանսների նախարարության 21.11.2022թ-ին ստացվել է թիվ 03/26-1/20248-2022 գրությունը, համաձայն որի՝ 15/11/2022թ. և 16/11/2022թ. ժամը 09:00-ից սկսած էլեկտրոնային աճուրդների համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես ժամը 15/11/2022թ. և 16/11/2022թ. 09:00-ից մինչև ժամը 16:30-ն անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում հրավերներով հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է, գնահատող հանձնաժողովը որոշեց չկայացած հայտարարել ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/79 ծածկագրով գնման ընթացակարգը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Տ. Պետրոսյան

անդամներ՝ _____ Շ. Առաքելյան

քարտուղար՝ _____ Ա. Քոթանջյան